5.12.2021
348-83

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար
Արայիկ Հարությունյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել 15.12.2021թ-ին Բրյուսելում կայացած Արևելյան գործընկերության 6-րդ գագաթնաժողովում ՀՀ Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթի ամբողջական տեքստը, քանի որ պաշտոնական կայքում հրապարակված հաղորդագրության մեջ (հղումը՝ https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/12/15/Nikol-Pashinyan-summit-of-the-Eastern-Partnership/) հստակ չեն Վարչապետի ելույթի հիմնական շեշտադրումները: Նշենք, որ ՀՀ Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի՝ 2021թ. նոյեմբերի 15-ի ելույթի ամբողջական տեքստը հասանելի է Նախարարության կայքում(հղումը՝https://www.mfa.am/en/speeches/2021/11/15/fm_mirzoyan_eap/11175):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am